

թեան իւրոյ թագաւորութեան, ամառնային ժամանակին հովանոցս պատրաստելով...», բայց էլ աւելի մանրամասնութիւն զգուշանում է նկարագրել:

Եթէ Տարոց մէջ մի այսպիսի Ոստան չլինէր, այն էլ «Պալխարի ստորոտովն», որի գոյութեան մասին, շատ հաւանական է, Խորենացին անձամբ լաւ տեղեակ էր, մանաւանդ որ այնտեղի քրիստոնէական տաճարի շինութիւնը, որ հեթանոսականից քրիստոնէականի է վերադարձուած եւ հինգերորդ դարից շատ առաջ է կառուցուած, դժուար թէ Խորենացին այս նկարագրութիւնը տար. ուստի ակներեւ է որ մինչեւ հինգերորդ դարը եւ ապա շարունակաբար Ոստանը իր դիրքը պահպանած է եղել:

Պարթեւական այս Ոստանը Գորգ դարումն էլ գոյութիւն ունէր, ուր Խոսրով թագաւորը ձմեռն անցկացնում էր, երբ հիւր ընդունեց Պարսկաստանից փախստական Անակին, իր տոհմակից Պահլաւին: Անակը «եկեալ յանդիման եղեւ թագաւորին Խոսրովու յու(ղ)տի գաւառի, ի Խաղխաղ քաղաքի ի ձմեռոցս արքայութեան Հայոց»: (Ագաթ. Բ. էջ 29, տպ. Թիֆլիս 1882 թ.): Անշուշտ այս Խաղխալը Ուտի գաւառում չէր, այլ Ուլթի (Օլթի), որտեղ գնտուում էին Պարթեւ-Պահլաւների կալուածները: Բացի Ագաթ. մեր պատմաբաններից ոչ ոք չի շատակում, թէ Պարթեւները Ուտիում կա-